

ՍԱՆԻԿ ԶԱԿՈՒՅԱՆ

ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑԱԾ
ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

«Մարդն իր կյանքի ինքնագիտակցումն է»:

Է. Ֆրոմ

Ինքնագիտակցության հիմնախնդրի շուրջ մեր կողմից ծավալած ներքոհիշյալ ուսումնասիրությունը նպատակ ունի տեսական վերլուծության ենթարկելու «անծ-ինքնագիտակցություն» փոխհարաբերության վերաբերյալ առանձին հոգեբանական ուղղություններում և դրանց հարող տեսություններում առկա մեկնաբանությունները վեր հանելու համար այն ընդհանուրն ու առանցքայինը, որ բնորոշում է դրա բովանդակությունը: Այն հնարավորություն կտամեզ համակողմանիորեն ներկայացնելու այն կարևորագույն գործառույթը, որ իրականացնում է ինքնագիտակցությունը անձի հոգեկան կյանքում, մասնավորապես՝ նրա հոգեկան առողջության ապահովման և նրա կողմից հոգեկան հասունության որոշակի մակարդակի ձեռքբերման գործում:

Անհրաժեշտ է նշել, որ տեսական հետազոտության մտահղացումը ծագեց այն բանից զուգընթաց, երբ խորհում էինք մարդկային հոգեբանության այնպիսի հիմնարար և բացառապես մարդկային դրսևորումների ներհոգեկան մեխանիզմների շուրջ, ինչպիսիք են նրա կամքի ազատությունն ու պրոակտիվությունը, արտացոլման օբյեկտիվությունն ու ռացիոնալությունը, անձի փոփոխելիության հնարավորությունը: Ջուլտ մարդկային այս հատկանիշների շուրջ խորհրդածությունները, որոնք մարդու հոգեկան կյանքում արտահայտվում են հակոտնյաների պատճառականության, իռացիոնալության, ռեակտիվության, սուբյեկտիվության և կայունության հետ հակադրամիասնության մեջ, օրինաչափորեն ծնում են հոգեբանական մեկ այլ ոչ պակաս կարևոր հիմնահարցի՝ այն է՝ առանձին անհատի մոտ այդ երկբևեռ հակադրամիասնությունների հարաբերակցության հոգեբանական պայմանների ուսումնասիրությունը:

Վեր կողմից վերոհիշյալ հիմնահարցերի շուրջ տևական խորհրդածությունը ծավալվեց և աստիճանաբար կենտրոնացավ ելակետային մի հասկացության՝ «ինքնագիտակցության» շուրջ մեզ համար ակնառու դարձնելով դրա առանցքային մշանակությունը բոլոր այս դրսևորումների գործառնության մեջ:

Սրանով էլ թերևս հիմնավորվում է անհրաժեշտությունը դիտարկելու ինքնագիտակցության հիմնախնդրի մեկնաբանությունը անձի հոգեբանությունը ուսումնասիրող տարբեր տեսությունների կողմից, վեր հանելու այն ընդհա-

նուրն ու առանցքայինը, որ պայմանավորված է անձի կառուցվածքում ինքնագիտակցության գործառնությամբ:

Սկսելով մեր էքսկուրսը առավել հայտնի հոգեվերլուծական տեսությունների՝ անհրաժեշտ է նշել, որ այստեղ երևույթը քննարկվում է գերազանցապես անձի համար դրա հոգեթերապևտիկ նշանակության առումով: Այս տեսության անկյունաքարն է հանդիսանում այն գաղափարը, որ անձի կողմից սեփական հոգեկան անգիտակցական բովանդակությունների գիտակցական վերապրումն ու իմաստավորումը հանդիսանում է ամենատարբեր հոգեախտաբանական երևույթների ամոքման և անձնային աճի անհրաժեշտ նախապայմանը:

Համարվում է, որ հոգեվերլուծական գործընթացում և դրա արդյունքում վերակառուցվում է մարդկային ես-ը, այն դառնում է առավել համապարփակ, ամբողջական, ներդաշնակ, իսկ անձը՝ հոգեբանական տեսակետից առավել հասուն:

Չնայած հոգեվերլուծության կատեգորիալ ապարատում «ինքնագիտակցություն» հասկացություն որպես այդպիսին գոյություն չունի, այնուամենայնիվ, ինքնագիտակցման ակտը հանդիսանում է հոգեվերլուծական գործընթացի կարևոր մեխանիզմներից մեկն ու միջանկյալ նպատակը:

Հոգեկան անգիտակցական բովանդակությունների գիտակցական վերապրման և իմաստավորման նպատակով կիրառվում է անձի կողմից ներկայացվող՝ ազատ զուգորդությունների, երազների, փոխանցման և դիմադրության հոգեվերլուծական մեկնաբանությունը (13,15.):

Վերոհիշյալ գաղափարները առավել ցայտուն արտահայտություն են ստանում հոգեբանության մեջ նեոֆրեյդիստական, հունանիստական և ֆեյնոմենալիստական ուղղությունների այնպիսի ակնառու ներկայացուցիչների աշխատանքներում, ինչպիսիք են Կ. Յունգը(18), Է. Ֆրոյդը (2), Ա. Ադլերը (3), Կ. Ռոջերսը (10), Ա. Մասլոուն (8), Վ. Ֆրանկը (14) և այլք:

Զարգացնելով հոգեվերլուծական ավանդույթը՝ Կ. Յունգը դիտարկում է ինքնագիտակցումը որպես անհատականացման գործընթացի անհրաժեշտ բաղադրիչ¹ (18): Ա. Ադլերի (3) կարծիքով հոգեթերապիայի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է անձի կողմից ինքնաճանաչման, սեփական անձը հասկանալու որոշակի մակարդակի ձեռքբերմամբ: Նա համարում է, որ անձի կատարելագործման միակ ուղին ինքնաիմացությունն է:

Մեկ այլ ուսումնասիրող՝ Կ. Ռոջերսը (10), ինքնաարտացոլման զարգացած ընդունակությունը համարում է անհատի հոգեկան առողջության կարևոր չափորոշիչներից մեկը: Այն, ըստ նրա, կազմում է անհատի էքզիստենցիալ

¹ Անհատականացման գործընթացը, ըստ նրա, մարդու կողմից սեփական ինքնատիպ հոգեկան կյանքի գիտակցական իրականացումն է, ինչը ենթադրում է անձի ներհոգեկան բոլոր տարրերի լիարժեք զարգացում ու արտահայտություն, ներանձնային տարբեր հսկանության ուժերի ու տենդենցների միավորում ամբողջական և ներդաշնակ ես-ի մեջ:

կենսածկի հիմքը և բնորոշվում է օրգանիզմիկ վստահությամբ, ենպիրիկ ազատությամբ և ստեղծագործելու ընդունակությամբ:

Ինքնագիտակցման գործընթացի վրա են հիմնվում հումանիստական հոգեբանությունը (8), Վ. Ֆրանկլի (14) լոգոթերապիան և կոգնիտիվ հոգեբանության շրջանակներում գործառնող ռացիոնալ թերապիան, գեշտալտ հոգեթերապիայի շրջանակում կիրառվող հոգեամոքիչ մեթոդների ու հնարների մեծ մասը:

Լույնիսկ վարքագծային հոգեբանության մեջ, ուր նվազագույնի է հասցված անհատի ներհոգեկան շարժընթացի ուսումնասիրությունը, հնարավոր չի լինում լիովին շրջանցել երևույթի քննարկումը: Այսպես՝ Ա. Բանդուրան իր տեսության շրջանակներում նկարագրում է ինքնագիտակցության մեխանիզմի վրա հիմնված ինքնաամրապնդման², իսկ Ջ. Ռոտտերը ներմուծում է սուբյեկտիվ ինտերնալ տիպի վերահսկողության գաղափարները (1,17)³:

Խորհրդային հոգեբանության մեջ անձի զարգացման ու ձևավորման գործում ինքնագիտակցության իրականացրած գործառնությունները լայնորեն քննարկվել են Լ.Ս. Վիգոտսկու (4), Ս.Լ. Ռուբինշտեյնի (11), Վ.Ս. Մերլինի (9), Ա.Ն. Լեոնտևի (6), Մ.Ի. Լիսինայի (7), Վ.Վ. Ստոլինի (12) և բազում այլ ուսումնասիրողների աշխատություններում:

Այսպես՝ Լ.Ս. Վիգոտսկին (4) խորապես համոզված է, որ անձի ձևավորման մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ առկա է նրա կողմից սեփական վարքի կառավարումը, որն իր հերթին, որպես նախադրյալ ենթադրում է սեփական հոգեկան օպերացիաների կառուցվածքի արտացոլում գիտակցության մեջ: Սա ի նկատի ունի նա, երբ պնդում է, որ այն ինչ ընդունված է անվանել «անձ», ոչ այլ ինչ է, քան նրա ինքնագիտակցությունը:

Ջարգացնելով Լ.Ս. Վիգոտսկու գաղափարները՝ խորհրդային մեկ այլ ուսումնասիրող Ս.Լ. Ռուբինշտեյնը (11) կարևորում է այն միտքը, որ անձի ուսումնասիրության ավարտական հիմնահարցը նրա ինքնագիտակցության բացահայտումն է, քանի որ նրա կարծիքով «...մարդը հանդիսանում է անձ այնքանով, որքանով նա առանձնացնում է իրեն բնությունից և այլ մարդկանցից և վերաբերմունքը դեպի բնությունն ու այլ մարդիկ տրվում է նրան որպես հարաբերություններ, այսինքն՝ այնքանով, որքանով նա ունի գիտակցություն և ինքնագիտակցություն.» Եր. 238.

² Ինքնաամրապնդման դեպքում, ըստ Ա. Բանդուրայի, անհատի վարքագիծը ամրապնդվում է հենց իր այդ վարքը դրսևորած անհատի կողմից, ով պարզևատրում է իրեն ձեռքբերումների և պատժում անհաջողությունների համար: Ա Բանդուրան համարում է, որ ինքնաամրապնդման մեխանիզմը մեծ դեր է կատարում հատկապես ինքնազարգացման գործում:(20)

³ «Սուբյեկտիվ վերահսկման տիպը», ըստ Ջ. Ռոտտերի, անձի ընդհանրացված սպառումն է այն բանի, թե ինչքանով է նա ինքը վերահսկում ամենատարբեր ամրապնդումները իր կյանքում:(1.21)

Ըստ Ա.Լ. Ռուբինշտեյնի՝ ինքնագիտակցությունը չունի զարգացման ինքնուրույն ուղի, այն ներգրավվում է անձի զարգացման գործընթաց որպես այդ զարգացման մի պահ, կողմ, բաղադրիչ: Խոսելով ինքնագիտակցության զարգացման հաջորդական փուլերի մասին՝ նա պնդում է, որ այդ գործընթացի արդյունքում մարդը ինքնորոշվում է որպես անձ ավելի ու ավելի բարձր մակարդակում: Նա նկատում է, որ անձի և նրա ինքնագիտակցության զարգացման այդ բարձր աստիճանում, հատկապես զգալի են դառնում անհատական տարբերությունները:

Վ.Ս. Մերլինը (9) նշում է, որ անձի կառուցվածքում ինքնագիտակցությունը իրականացնում է երկու կարևորագույն գործառույթ՝ այն պայմանավորում է անձի ինքնակատարելագործման և իրականության վերափոխման նպատակով սեփական հոգեկան հնարավորությունները կիրառելու նրա ընդունակությունները:

Անձի զարգացման որոշակի մակարդակում, ըստ Վ.Ս. Մերլինի, ինքնագիտակցությունը հսկայական նշանակություն է ձեռք բերում անձի քննավորության և ընդունակությունների ձևավորման, ինչպես նաև գործունեության հաջողության ապահովման գործում: Կոնկրետ գործունեությանը անձի հարմարման ուղիները ևս, ըստ Վ. Ս. Մերլինի, նրա զարգացման որոշակի աստիճանում այս կամ այն չափով իրականանում են ինքնագիտակցության մասնակցությամբ:

Դիտարկելով անձի ձևավորումը որպես նրա կողմից իրականացվող ամենատարբեր գործունեությունների միավորման գործընթաց՝ Ա.Ն. Լեոնտևը (6) դրանում մեծապես կարևորում է գիտակցության և ինքնագիտակցության դերը, որոնք, նրա կարծիքով, միջնորդավորում և ամփոփում են այդ գործընթացը:

Ձարգացնելով այս միտքը անհրաժեշտ է նշել, որ անձի շարժառիթավորման գործընթացում ինքնագիտակցության իրականացրած գործառույթները ուղղակիորեն և անուղղակի քննարկվել են թե խորհրդային և թե արևմտյան ամենատարբեր հոգեբանների աշխատություններում (5,6,8,12,6,16): Այդ մոտեցումների ընդհանրական վերլուծությունը ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ անձի շարժառիթավորման մեջ ինքնագիտակցության գործառույթությունը պայմանավորում է իրենով մոտիվացիոն ոլորտի զարգացվածության մակարդակը դրա հիմնական չափորոշիչների լայնության, ճկունության և աստիճանակարգվածությունը տեսակետից:

Բացի դրանից, այդ վերլուծությունը մեզ համար բացահայտում է մի կարևոր միտք այն մասին, որ վարքի շարժառիթավորման մեջ ինքնագիտակցության որպես հոգեկան գործընթացի մասնակցության չափով է անմիջապես նորեն պայմանավորվում անձի այնպիսի հիմնարար հատկանիշների դրսևորման ինտենսիվությունը, ինչպիսիք են՝ պրոակտիվությունն ու կամքի ազատության չափը, արտացոլման ռացիոնալության և օբյեկտիվության մակարդակը, ինչպես նաև՝ անձի փոփոխելիության հնարավորությունը:

Ամփոփելով ասվածը ներկայացնենք այն ընդհանուրը, որ միավորում է ինքնագիտակցության հիմնախնդրի մեկնաբանությունը բոլոր այս մոտեցումներում:

Նախ վերևում հիշատակված հոգեբանական գրեթե բոլոր ուղղություններում և դրանց հարող առանձին տեսություններում ինքնագիտակցման զարգացած ընդունակությունը դիտարկվում է որպես անձնային աճի, ինքնակատարելագործման և ինքնաիրականացման կարևորագույն նախապայման: Բոլոր այս մոտեցումներում ընդգծվում է դրա նշանակությունը մարդկային էս-ի կայացման, նրա անհատականության կերտման գործում: Հոգեամոքիչ անենատարբեր համակարգերում ինքնագիտակցման ակտը հանդես է գալիս որպես հոգեամոքիչ գործընթացի կարևորագույն տարր ու միջանկյալ նպատակ: Գիտակցական ինքնաարտացոլման զարգացած ընդունակությունը՝ անհատի կողմից ինքն իր հարաբերականորեն համարժեք և համակողմանի գիտակցումն ու արժևորումը դիտարկվում է որպես հիմնական չափորոշիչ, որ բնորոշում է հոգեպես հասուն և առողջ անձնավորությանը:

Ամփոփելով մեր տեսական ուսումնասիրությունը կարելի է պնդել, որ ինքնագիտակցությունը մարդու մարդկայնության հիմնական չափորոշիչն է, որը անմիջականորեն պայմանավորում է նրա հոգեկան կյանքի զուտ մարդկային դրսևորումները:

Գրականություն

1. Հակոբյան Մ. Ի. Սուբյեկտիվ վերահսկողության ինտերնալ լոկուսը՝ որպես ինքնագիտակցության զարգացման մակարդակի չափորոշիչ Գեղ. հրատ. եր. 2006
2. Ֆրոմ Է. Սիրելու արվեստը. եր., 1996
3. Адлер А. Понять природу человека. СПб., 1997
4. Виготский А.С. Собрание сочинений. В 6 т. — М., 1984
5. Виллюнас В. К. Психологические механизмы мотивации человека. — М., 1990
6. Леонтьев А.Н. Избранные психологические произведения. В 2 т. - М., 1983
7. Лисина М.И. Проблемы онтогенеза общения. - М., 1986
8. Маслоу А. Мотивация и личность. - СПб., 1999.
9. Мерлин В. С. Структура личности: характер, способности, самосознание. — Пермь, 1990.
10. Роджерс К. Взгляд на психотерапию. Становление человека. - М., 1994.
11. Рубинштейн С.А. Проблемы общей психологии. - М., 1973
12. Столин В.В. Самосознание личности. - М., 1983.
13. Томэ Х., Кэхеле Х., Современный психоанализ Т. 1. Теория. - М., 1996
14. Фрейд В. Человек В поисках смысла. - М., 1990.
15. Фрейд З. Избранное. - М., 1990
16. Хекхаузен Х. Мотивация и деятельность. - М., 1986
17. Хьелл Л., Зиглер Д. Теории личности. — СПб, 2002. 608 с.
18. Юнг К. Сознание и бессознательное. - М., 1997